

2014 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

2014 թվականի հոկտեմբերի 14-ին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը Հայաստանի բասկետբոլի ֆեդերացիայի հետ համատեղ Երևանի լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ կրթահամալիրի մարզադահլիճում իրականացրել է ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառում՝ կրթահամալիրի սաների մասնակցությամբ:

2014 թ. հոկտեմբերի 3-8-ը խուլերի մշակույթի և սպորտի պալատում անցկացվել է խուլերի հունա-հռոմեական և ազատ ոճի ըմբշամարտի պատանիների աշխարհի առաջնությունը:

2014 թվականի սեպտեմբերի 10-ին Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միության կողմից Գրանդ Սպորտ մարզահամալիրում կազմակերպվել է անվասայլակներով բասկետբոլի ցուցադրական խաղ:

2014 թվականի հուլիսի 25-ից մինչև օգոստոսի 7-ը պետական աջակցության ծրագրի շրջանակներում անցկացվել է կույր շախմատիստների ՀՀ առաջնությունը, որին մասնակցել են 16 կույր շախմատիստներ:

2014 թվականի հունիսի 28-30-ը խուլերի հունա-հռոմեական ոճի ըմբշամարտի ՀՀ առաջնությունն է անցկացվել (73 մասնակից), իսկ հունիսի 23-25-ը խուլերի ազատ ոճի ըմբշամարտի ՀՀ առաջնությունը, որին մասնակցել են 42 մասնակից:

2014 թվականի հունիսի 18-28-ը Հայաստանի խուլ շախմատիստների ՀՀ հավաքական թիմը (8 հոգի) մասնակցել է Խորվաթիայի Օպատիա քաղաքում անցկացվող խուլերի շախմատի աշխարհի առաջնությանը:

2014 թվականի հունիսի 11-ին պետական աջակցության ծրագրի շրջանակներում «Հայաստանի ազգային պարաօլիմպիկ կոմիտե» հասարակական կազմակերպության հետ համատեղ անցկացվել է հաշմանդամների 12-րդ հանրապետական մարզական փառատոնը, որի շրջանակներում «Գրացիա. հայկական կարմիր խաչի ընկերության միջազգային վերականգնողական կենտրոնում կայացել է հաշմանդամային սպորտի հիմնահարցերին նվիրված սեմինար-խորհրդակցություն, որին մասնակցել են շահագրգիռ նախարարությունների և հաշմանդամային սպորտով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև ԱՄՆ-ից ժամանած «Մոբիլիթի ինտերնեյշնլ» կազմակերպության ներկայացուցիչները:

2014 թվականի մայիսի 13-15-ը պետական աջակցության ծրագրի շրջանակներում Վանաձորում անցկացվել է «Հայկական հատուկ օլիմպիադաներ» համաեվրոպական ֆուտբոլի շաբաթ ծրագրով ՀՀ ֆուտբոլի առաջնությունը, որին մասնակցել են Երևանի, Վանաձորի և Ալավերդի քաղաքներից թվով 40 մասնակիցներ:

2014 թվականի մայիսի 7-ին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը համագործակցելով ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի (ՅՈՒՆԻՍԵՖ) և խուլերի հայկական սպորտային կոմիտեի հետ իրականացրել է «Ուրախ մեկնարկներ» մարզական միջոցառումը՝ խուլ ընտանիքների մասնակցությամբ, որին մասնակցել են թվով 12 խուլ ընտանիք: Միջոցառման հաղթողները պարգևատրվել են նախարարության շնորհակալագրերով և պատվոգրերով, իսկ ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից նվերներ են հանձնվել բոլոր մասնակիցներին:

2014 թվականի մայիսի 5-8-ը պետական աջակցության ծրագրի շրջանակներում Երևանի շախմատի տանը կայացել է խուլերի շախմատի 9-րդ ՀՀ առաջնությունը, որին մասնակցել են Երևանի, Վանաձորի, Մարտունու, Գյումրու և Աբովյան քաղաքների 34 մասնակիցներ:

«2014 թվականին Սոչիում կայանալիք ձմեռային պարաօլիմպիկ խաղերին նախապատրաստման և մասնակցության ապահովում» ծրագրի շրջանակում ապահովվել է ՀՀ մարզական պատվիրակության մասնակցությունը Ռուսաստանի Դաշնության Սոչի քաղաքում անցկացվող ձմեռային պարաօլիմպիկ խաղերին (1 մարզիկ, 1 մարզիչ, 1 բժիշկ, 1 պատվիրակության ղեկավար):